Պարույր Սևակ

Հայոց լեռները

Ասում են, թե մի ժամանակ,
Ինչքա՜ն առաջ՝ ի՞նչ իմանաք,
Եղբայրներ են եղել հսկա մեր լեռները:
Զարթնել են շուտ,
Ելել ոտի,
Նա՛խ կապել են իրենց գոտին,
Լվացել են պաղ ամպերում
Իրենց երեսն ու ձեռները,
Հետո՛ միայն «բարի լույս» են իրար ասել
Եվ իրարից «բարի լույս» են սիրով լսել:
Եվ մի՛շտ այսպես
Ու ճիշտ այսպես.
Շուտ են զարթնել, ելել ոտի,
Նա՛խ կապել են իրենց գոտին,
Հետո՛ միայն բարև ասել,
բարև լսել:
Անց է կենում շա՛տ ժամանակ,
Ինչքա՜ն արդյոք՝ ի՞նչ իմանաք,
Եղբայրները ծերանում են
Ու մի օր էլ շատ են քնում,
Շատ են քնում - ուշ վեր կենում

Եվ ի՜նչ... հանկարծ մոռանում են
Նախ և առաջ կապել գոտին.
Առանց գոտու ելնում ոտի,
«Բարի լույս» են իրար ասում,
Բայց... իրար ձայն է՞լ չեն լսում:
Եղբայրները քարանում են,
Դառնում լեռներ հազար ու բյուր,
Նրանց աչքի արցունքները՝
Հազար աղբյուր,
Նրանց մեջքի գոտիները՝
Դաշտ ծաղկաբույր...
...Ով ուզում է չքարանա,
Պիտի որ նա չմոռանա
Զարթնել շատ շուտ,
Ելնել ոտի,
Մեջքին կապել ամուր գոտի
Այսինքն՝ միշտ գոտեպնդվել
Ու եղբորը գոտեպնդել...